



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8935

ԱՆ

Պատմութիւն
Հայոց Առաջնահերթ
Ուղիւներուց

9(47.925)

Խ-26

ՉԱՒՑՈՂԻՑ

ՅԵՐԵՎԱՆ 1932

01 SEP 2011
31 AUG 2007

Ա. ԽԱՆՉՅԱՆ

Հ | ՃՐ.
2-127382

9(47-925)

Խ-26

ՊԱՅՔԱՐԻ ՈՒ
ՑԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ
ՈՒՂԻՆԵՐՈՎ

ԿՈՒԶԲԱՏ
ՑԱՂԹԱՆ 1932 թ.

Մինչ 30

Խորհրդային Հայաստանը, վոր տոնում և այսոր իր հաղթականի և սոցիալիստական շինարարության առաջին տասնամյակը, խորհրդային ամենավորը հանրապետություններից մեկն և իր տերիտորիայով և բնակչիների թվով: Սակայն՝ չնայած դրան, խորհրդային իշխանության հաղթանակը և սոցիալիզմի կառուցման տասնամյա փորձը Հայաստանում ունի վոչ միայն զուարեղական կամ հայկական, այլ նաև միջազգային խոշոր նշանակություն: Խնդիրն այդպես է զրվում, վորովհետո Խորհրդային Հայաստանի փորձը շոշափելի կերպով գրաւերում և իսկապես աներեւակայելի այն հեղաշրջումը, զար բերում և իր հետ բանվորների և աշխատավոր դյուզացիների հաղթանակը, խորհրդային իշխանության հաստատումը մի յերկրում, վոր մինչ այդ հայտնի յեր միայն վորպես արյունաքամ ու հոշափած իմպերիալիստական գաղղութ, իմպերիալիստական ուժերի բազմության թատերաբեմ՝ հասած արդեն խոկ վոչ միայն տնտեսական քայլայման ու անկիման, այլ նաև ֆիզիկական բնաջնջման ծայրագույն աստիճանի:

Առօրդային Հայաստանի (ինչպես նաև Աղբքաջանի, Բուխարայի և այլն) փորձն ապացուցում է, ովոր խորհրդային իշխանության գաղափարները և սկզբունքները մատչելի յեն և անմիջապես իրադրժելի վոչ միայն արդյունաբերական տեսակետից գարգաղած յերկիրճարութ, մոչ և իսկայն ունենալով սոցիալական այնպիսի, մի ռենդիրան, վորպիսին և պրոլետարիատը, այլև ունենալով՝ այնպիսի իշկիմք, ինչպես գոյութա-



4346-1
q. 5578. d7

ցիությունն ե» (Լենին) : Խորհրդային Հայտոտանի փորձը ցույց է տալիս խմբերի լիստների և նրանց տեսքույժ «աղդային» արբանյակների ամենավայրագ շահագործման որյեկտ հանդիսացող փոքր ժողովուրդների ազատագրության և վերելքի միակ ճանապարհը : Այդ ճանապարհն իմացերիալիստների և նրանց արյունոտ կառքին փարված ազգային ըուրժուազիայի լուծը թոթափելու ճանապարհն և, յերբ փոքրաթիվ, բայց կոմունիստական կուսակցության դրոշի տակ կազմակերպված բանվոր դասակարգը, պրոլետարական դիլտատուրայի առաջին միջնաբերդի յեղայրական ոգնությամբ, գլխավորելով աշխատավորական լայն զանգվածների հեղափոխական պայքարը, բաց կոմուն ջախչախում և բուրժուազիայի տիրապետությունը և նրա պետականության դրամատիկական իշխանությունը :

Դաշնակցական հրապարակադիրները դեռ մինչեւ այսօր ել ձեռք չեն քաջում պատմական անհերքելի փաստերը կեղծելու ճիգերից : Հասարակական յերեսույթները կարճամիտ քաղքենու ակնոյներով միայն տեսնելու ընդունակ այդ մարդիկ շարունակում են առավելներ հյուսել իշխանության «խաղաղ և կամուլին» փոխանցման մասին : Բայց իրականությունը գալիս ե ասելու, փոքր դաշնակցականների «Հրաժարումը» իշխանությունից ճիշտ այնպես և այնքան եր «կամուլին», վորքան, որինակ, Ռումանովների «Հրաժարումը» դահից՝ Փետրվարյան հեղափոխության որերին : Տիրող գասակարգերի կողմից իշխանությունից հոժարակամ հրաժարվելու վոչ մի դեպք չգետե դասակարգյին պայքարի պատմությունը :

Հայ բուրժուազիայի պետականությունը կառուցող դաշնակցականների իշխանությունը տապալվեց՝ նարնատվելով ներքին հակասություններից, բանվորա-գյուղացիական մասսաների հարվածների տակ : Մայլսյան ապատամբությունը, Ղար-

առամ, Սարիղամիշում, Նոր-Բայազետում, Դիլիջանում և Ղաղախում անբուժելի վերքեր բաց արին ազգայնական-բուժություն Հայաստանի որդանիզմի վրա : Չնայած իր ժամանակավոր պարտության, մայլսյան ապատամբությունն անսուելի չափով խորացրեց անդունքը տիրող դասակարգերի և յերկրի բանվորական ու աշխատավորական լայն մասսաների միջն, մինչեւ վոր նոյեմբերին, յերբ ծայր աստիճան սրվեցին Հայաստանի բուրժուական «հանրապետության» ներքին և արտաքին հակասությունները, Ղաղախի ապատամբ գյուղացիների նոր հարվածը գետ մայիսին բացված անդունքը գլուրեց դաշնակցականների իշխանությունը հենց այն որերին, յերբ դաշնակցական կառավարությունը փորձում եր իշխանության «խաղաղ» հանձնման քողով զեթ վորոշ չափով վարդուրել վերջնական մասնկության և կրախի խայտառակ պատկերը ու Հայաստանի ապատամբած բանվորների և գյուղացիների վրեժից ձողոպրելու, սեփական կաշին փրկելու ճանապարհ գտնել :

Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաների նոյեմբերան հաղթանակից հետո այլևս անզոր ելին դաշնակցականների նոր ճիգերը՝ կենդանացնելու Հայաստանի բուժությունական հանրապետության նեխած զիակը : Անդիլիական գլխավոր շտաբի անմիջական թելադրությամբ սկսված փետրվարյան հականեղափոխական ավանայուրան վերջացավ դաշնակների համար ճակատագրական հետեանքով : Քաղաքացիական կոխիները Հայաստանում, 1921 թիվ ոկտոբերի հանդիսանալով մեր բանվորների և աշխատավոր գյուղացիների բազարական կոփավածքի ու հասունության մի դպրոց և արդ չիման վրա եւլ ավելի ամրացնելով խորհրդային իշխանությունը, միաժամանակ հայ բուրժուազիայի զեկավար կուտակցության՝ Դաշնակցության, ինչպես նաև մյուս բուժությունական և մանր-բուրժուական կուսակցությունների հետ (ռաժկագարներ, հայ եսերներ, սոցիալ-դեմոկրատներ,

հնչակյաններ և այլն) հեղափոխական հաշվեհարդար կտառ-
րելու շրջանը գարձան:

Նոյեմբերի 29-ին բացվեց Հայաստանի պատմության մեջ
ամենախոր ակոսը: Իշխանության դեկն իր ձեռքն առավ բան-
վոր դասակարգը, տանելով իր հետեւից աշխատավորական
ամենալայն գանդվածները: Մեր յերկիրն ստացավ իսկական,
փաստական անկախություն՝ ազատվելով իմպերիալիստների
ու նրանց բոլոր տեսակի ու դույնի լակեյների «ինամակալու-
թյունից»: Վերջ դատավ ստրկական այն դրությունը, վորի
մէջ տապակիվում եր Հայաստանը դաշնակցականների տիրա-
հոչակ տիրապետության ժամանակ, մերթ արյունաքամ լի-
նելով կարաբեքիր փաշանների կրնկի տակ, մերթ խաղաղիք
գարձած Ստոքսների կամ Հասկելների ամենաղաղթելի կամա-
յականություններին:

Նոյեմբերի 29-ը Հայաստանի բանվորաւություղացիական
մասսաների դասակարգային սպատառքաման որն և : Հաղթա-
նակի այդ փայլուն եջը հնարավոր յեղալ չնորհիվ նորհրդա-
յին Ռուսաստանի պրոլետարիատի յեղացրական հզոր աջակ-
ցության: Առանց ապահով թիկունքի՝ հանձինս Ազգբեջա-
նի և ապա Վրաստանի յեղացրական խորհրդացին հանրապե-
տությունների—չեր կարելի պատկերացնել խորհրդացին իշ-
խանության ամրացումը Հայաստանում: Խորհրդացին Ռու-
սաստանի, Ազգբեջանի և ապա նաև Վրաստանի պրոլետարա-
կան աջակցությունը մի կողմից, մասսաների ստեղծագործա-
կան արողջ յեռանդն ու կորովը կաշխանդած Դաշնակցու-
թյան շղթաների խորտակումը մյուս կողմից ու առաջ յերկու
կարեսրազայն աղքակներ, փարոնց վրա հենքած՝ խորհրդա-
գային իշխանությունը Հայաստանում ի վիճակի յեղավ տըն-
տիսական անորինակ փլուզման յենթարկված յերկիրը հանել
այդ ծանր դրությունից և տանել սոցիալիստական շինարա-
րության մէծ վերկերի ուղիով:

Ի՞նչ պատկեր եր ներկայացնում Հայաստանը խորհրդաց-

նացման նախորյակին: Դժվար թե ճարվի յերկրագնդի վրա
մի անկյուն, վոր իր տրագիկ վիճակով կարողանոր մրցել
իսկական այն տանջարանի հետ, վորի անունն եր «Հայաս-
տանի հանրապետություն»: Փողովրդական տնտեսության
կատարյալ անկում: Արդյունաբերության բացարձակ կործա-
նում: Գյուղատնտեսության կրծառում մինչև նախազա-
տերազմյան չափի մեկ քառորդը: Բազմաթիվ պատերազմնե-
րից և ազգամիջյան անվերջ չարգերից ամայացած ու ավե-
րակների վերածված գյուղերի կույտեր: Անդիմական իմպե-
րիալիստների թելադրությամբ սկսված վերջին ավանտյու-
րայի՝ Հայ-տաճկական պատերազմի ահռելի հետևանքներ:
Յերկաթուղային հաղորդակցության կազմալուծում: 50 հա-
զարից ավելի անողնական ու սովահար վորբեր: Միքանի հա-
րյուր հազար վոչ մի տնտեսություն չունեցող գործազուրկ և
նպաստով ապրող բարոյալքված գաղթականների բազմու-
թյուն: Համատարած սով և անվերջ համաճարակներ: Տար-
րական իրավունքի և որինապահության լիակատար բացակա-
յություն: Դաշնակցական խմբապետների, կուլտների ու
սպեկուլյանտների անսահման իշխանություն և սանձարձակ
սիրապործություններ:

Այս բոլորն անմիջական արդյունք եյին դաշնակցական
տիրապետության: Ինչքան ել յանկանան այսոր դաշ-
նակներն աղատվել այդ ամենի պատասխանատվության
վեթ ամենափոքր մասից, այդ նրանց չի հաջողվի: Զե՞
զոր վոր Դաշնակցությունն որգանապես հենց այդպիսի
«բարեմասնություններ» միայն կարող եր սնուցանել:
Նա ինքն իրեն դավաճանած կլիներ, յեթե վարեր այլ քաղա-
քականություն: Դաշնակցությունը հակասած կլիներ իր դա-
սակարգային և յությանը, յեթե հրաժարվեր իմպերիալիստա-
կան պատերազմի համար թնդանոթի միս մատակարե-
լուց, թուրք և հայ աշխատավորների չարգերից, անվերջ
թաղանակից ու աշխատավոր գյուղացիության անսեմելի

կեղեքումից՝ կուլակների ողտին։ Դաշնակցությունը, հավատարիմ իր սոցիալական բնությանը, մեր յերկրի աշխատավորությունը մինչև վերջնական բնաջնջումը կտաներ, յեթե չստանար նոյեմբերի 29-ի ջախջախիչ հարվածը։ Հայաստանի բանվորության և աշխատավորության ֆիզիկական դոյցության և վերելքի միակ յելքը խորհրդային իշխանությունն եր։

Խորհրդային Հայաստանը, փաստումն աղատելով Հայաստանի բանվորներին և աշխատավորներին վերջնական բնաջնջումից, սկզբից ենթ քայլեց Լենինի դժած ուղիներով։ Նրա առաջին գործը յեղավ ազգամիջյան հաշտ կենակցության և խաղաղության հաստատումը։ Իր հայտնի նամակում Լենինը հույս եր հայտնում, վոր «Կովկասի խորհրդային հանրապետությունների սերտ միությունը կստեղծի աղդային խաղաղության մի որինակ, վորը չի տեսնված բուժուաղիայի ժամանակ և վորն անհնարին և բուժուական հասարակարգում»։ Խորհրդային Հայաստանի առաջին իսկ քայլերն ընթացան ընկ. Լենինի այս պատգամի կիրառման ուղղությամբ։ Աղդամիջյան խաղաղության և տարբեր ժողովությունների աշխատավորության սերտ համադործակցության հաստատումը, Սնդդիմովայան Հանրապետությունների Սոցիալիստական Ֆեդերացիայի կազմակերպումը և ավելի ամրացումը, ինտերնացիոնալիստական կապերի անխախտելի ուժեղացումն Անդրկովկասի բազմազդի աշխատավորության միջև, —աւա մեր առաջին և կարեռարդույն հաղթանակը, բուրու նվաճումների նախադրյալն ու գրավականը։

«Բայց վարքան ել կարեոր լինի խաղաղությունը Կովկասի բանվորների և զյուղացիների միջև, ել ավելի կարեոր ե, սակայն, պահպանել ու զարգացնել խորհրդային իշխանությունն իրեւ մի անցում դեպի սոցիալիզմը», —շարունակում եր մեծ առաջնորդը։ Անդրկովկասայան յերեք սոցիալիստական խորհրդային հանրապետությունների պայքարի և

ընտարարության տասնամյա ուղին հենց ամենից առաջ խորհրդային իշխանության, վորպես դեպի սոցիալիզմ անցման միջոցի, «պահպանման ու զարգացման» ուղին ե։

Այսոր, յերբ տոնում ենք Խորհրդային Հայաստանի սոցիալիստական շինարարության առաջին տասնամյակը, կրելով անշուշտ վիճակադրական բաղմաթիվ թվեր և փաստեր մեր անցած ուղիի, մեր պայքարի և աշխատանքների արդյունքների մասին։ Հայաստանի աշխատավորական մասսաներն առանց այդ թվերի ել տեսնում և շոշափում են մեր սոցիալիստական հոյակապ վերելքի թափն ու ծավալը։ Նրանք «սեփական ձեռներով» են կերտում սոցիալիստական Հայաստանը։ Հնարավո՞ր և արդյոք վորեւ համեմատություն նախախորհրդային Հայաստանի և Խորհրդային Հայաստանի ներկա զրության միջև։ Հյուծված ու մեռնող ժողովրդի փոխարեն, յեր 1919 թվին միայն Յերևանում, ըստ պաշտոնական տեղեկությունների, 5 ամսվա ընթացքում մեռնում եր 3972 մարդ, այսոր մենք ունենք առողջ և արագությամբ աճող աղդաբնակություն։ Այստեղ, ուր չեր մնացել արդյունաբերության վորեւ նշույլ առհասարակ, այսոր աշխատում են ու կառուցվում սոցիալիստական արդյունաբերական իսկական հօլաներ, նորանոր գործարաններ՝ կառուցվող սոցիալիզմի գլխավոր ամբողները։ Միայն ցենզային արդյունաբերության տարեկան արտադրանքը, վոր, անփոփոխ գներով, 1913 թ. կազմում եր 20 միլ. ոռորդի, իսկ 1919 թ. հավասարվում եր զերոյի, 1930 թ. հասալ մոտ 50 միլ. ոռորդու։ Անում ե քանակով, ամրանում վորակով մեր յերիտասարդ պրոլետարիատը։ 1923 թ. 14.800 վարձու աշխատանքով զբաղվողների փոխարեն 1930 թ. վարձու աշխատանքով զբաղվողների թիվը հասալ 65.000-ի։ Ելեկտրոշինարարությունն առաջ ե զնում թորիքային տեմպերով՝ կատարելու համար հետամնաց մեր յերկրի վողջ տնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմնական իժակի դերը։

Դարերի ընթացքում թմբած ու չողտադործվող մեր ընական հարստությունները, մեր տնտեսական բոլոր հնարավորություններն այսոր հայտաբերվում են ու շարժման մեջ են դրվում: Մենք թեակուել ենք այն շրջանը, յերբ աստիճանաբար սկսում ե վերանալ քաղաքի և գյուղի միջև գոյություն ունեցող անդունդը: Արագանում ե գյուղի սոցիալստական վերակառուցման տեմպը: Հայաստանի ցանքսալաշտերը, վորոնց տարածությունը 1919 թվին ընկել ել մինչև 82.000 հեկտար, այսոր բռնում են արդեն մոտ 400.000 հեկտար տարածություն: Մեր խորհրդային տնտեսությունները, հաղթահարելով աճման դժվարությունները, սկսում են կատարել հետամնաց ու ցիրուցան գյուղատնտեսության սոցիալստական վերակառուցման առաջամարտիկների դերը: Նրանց հետեւում են կոլեկտիվ տնտեսությունները, վորոնք միացնում են արդեն մեր գյուղացիական աշխատավորական տնտեսությունների 11 տոկոսը:

Վերակառուցվում ե գյուղատնտեսության վողջ տեխնիկական-արտադրական բազան: Վոռոգման հոյակապ աշխատանքները խլում են դարավոր անապատներից ստեղծագործաշխատանքի համար հսկայական տարածություններ: Շինարարական այս վիթխարի ձեռնարկներին, ժողովրդական արնահետության սոցիալստական վերակառուցմանը զուգընթաց՝ գնալով բարելավվում ե բանվորների և աշխատավորական լայն մասսաների նյութական կենցաղային դրությունը, հսկայական արագությամբ բարձրանում ե նրանց քաղաքական-կուլտուրական մակարդակը:

Խորհրդային Հայաստանի տնտեսական անորինակ վերելքին համալատասիանում ե կուլտուրական շինարարության հսկայական թափն ու ծավալը: Լենինյան աղդային քաղաքականության անշեղ կիրառման արդյունքներն այսոր այնքան են ունրախ ու անվիճելի, վոր մեր թշնամիներն իսկ անկարող են դրանք բացասել: Խավարի և տգիտության, ասիական

թմբածության և դանդաղաշարժության դասական կենտրոնը, Յերևանը, Հայաստանն առհասարակ՝ արդեն անձանաչելի յեղարձել: Անգրագիտության մասսայական վերացում, ընդհանուր պարտադիր ուսման կիրառում, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հիմնարկների հսկայական մի ցանց, նախախորհրդային վորեւ չափով չչափվող հրատարակչական գործ, սեփական գիտական և մասնագիտական կաղղերի հետզհետե խտացող շարժեր, կինո, թատրոն, դրականություն, յերաժշտություն, —այս բոլոր բնագավառներում աչքի ընկնող հաջողությամբ մենք կառուցում ենք պրոկտարական կուլտուրա՝ աղցային ձեռով:

Արդարեւ, անողուաւ ե վորեւ համեմատություն նախախորհրդային և ներկա Հայաստանի միջև: հոշոտված արյունաքամ իմպերիալիստական գաղութի և ազատ ու անկաշկանդ, դեպի տնտեսական ու կուլտուրական չտեսնված բարձունքներ սլացող մեր խորհրդային յերկրի միջև:

Խորհրդային Հայաստանն անցավ իր վերելքի տասնամյա ուղին վոչ թէ «խաղաղ» աշխատանքի պայմաններում, այլ ամեն բոպի և ամեն քայլափոխում հաղթահարելով դասակարգային թշնամու գիմաղըությունը: Բաղմիցս իրենց վողնաշարերը ջարդած գանակցականները՝ կաշառված իմպերիալիստների վրակիներով և զինված նրա ղենքերով, տասը տարվա ընթացքում և վոչ մի բոպի չեն գաղարել դավեր հյուսել Խորհրդային Հայաստանի դեմ: Հենված կուլակության և կապիտալիստական տարրերի մնացորդների վրա, նրանք բաց չեն թողել և վոչ մի միջոց—պայքարի քողարկված ձեերից սկսած մինչեւ ակտիվ ու անմիջական յեկութներ—խանգարելու մեր աշխատանքները, կասեցնելու մեր սոցիալստական հարձակողականը: Նրանք, ինչպես նաև նրանց պատվերը կատարող և զանաղան դիմակներով դիմակավորված նացիոնալիստական կամ նացիոնալ-ռեկլոնիստական այլ հատվածները,

շարունակում են դործ զնել բուրժուազիայի կողմից աշխատավորական մասսաներին գաղափարապես դերելու ամենաթունավոր գենքը՝ նացիոնալիզմը։ Յեվ սակայն մեր գլխավոր թշնամու՝ Դաշնակցության և նրա արքանյակների բոլոր փորձերն ապարդյուն են անցել և տռաջիկայում ել գտապարտված են խայտառակ պարտության։

Մենք ներկայումս շարունակում ենք հավաքել յայն ու
համառ նախապատրաստական աշխատանք՝ համատարած
կոչեկտիվացման հիման վրա՝ վերացնելու դաշնակիլոմի հիմ-
նական հենարանը մեր յերկրում, այն և՝ լիկվիդացիայի յեն-
թարկելու գյուղական կապիտալիստներին, կուլտիվներին վոր-
պես դաստիարգ։ Դաշնակները մեր գեճ պայքարի հիմնական
միջոց համարում են գյուղական կուլտակների կազմակերպու-
մը։ Կուլակության դոյցության և ակտիվության հետ են կապ-
ված Դաշնակցության «ռեստավրատորական» բոլոր հույսե-
րը։ Մենք եւ մեր կողմից կանգ չենք առնի ամենախիստ
միջոցների առաջ՝ հանդեպ գյուղի տղբուկների, հարստահա-
րողների, կուլակների, ջախջախներու համար մինչև վերջը կու-
լակության դիմադրությունը, հանելու համար մեր գյուղի
խալարից, տղիտությունից, բաց անելու համար մեր գյուղի
առաջ լայն ճանապարհ գեպի անդասակարգ հասարակակարգ,
գեպի սոցիալիզմ։

Խորհրդային Հայաստանի առաջին տասնամյակը Հայաստանի կոմունիստական կուսակցության պայքարի և հաղթանակի տասնամյակն է։ Մեր կուսակցության ղեկավարությամբ, նրա վարած քաղաքականությամբ միայն Հայաստանի բանվորները և աշխատավոր գյուղացիները ձեռք բերին լրինց պատմական նվաճումները։ Խորհրդային Հայաստանի տասնամյակը նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպական ամրացման և բայլշեիկացման տասնամյակն է։ Խորհրդայնացման նախորյակին յեղած ժիքանի հարյուր անդամների փոխարքեն այսոր

Ներ կուսակցության լենինյան գրոշի տակ կազմակերպված են արգեն 17,000 կոմունիստներ և 50-000 կոմյերիտականներ : Կովկելով դասակարգային պայքարի բոլում, պայքարելով լենինյան մեթոդներով՝ յերկու Փրոնստի վրա՝ դլխամբոր վատանդ՝ աջ թեքման դեմ, «Ճախ» թեքման դեմ, մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը կարողացավ հայտարկել և ջախջախել դասակարգային թշնամու ճնշման արդյունքը հանդիսացող աջ ուղղությունիստական, նացիոնալությունիստական թեքումը սեփական շարքերում : Հետապնդելով մինչև վերջը կուսակցության դլխամբոր գծեց թեքվելու ամեն մի արտահայտություն, անհաշտ ու անինա մերկացնելով և հարվածելով կուսակային աջ թեքումը և նրա հետ շատ հաճախ դաշինք կապող «Ճախ» թեքումը, ինչպես նաև հաշտվողական վերաբերմունքը հանդեպ այս թեքումների, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը թևակոխում է Խորհրդային Հայաստանի յերկրորդ տասնամյակը՝ մարտունակ ու աննկուն շարքերով, պատրաստ մինչև վերջը կատարելու իր պատմական պարտքը, դլխամբորելու բանվորագյուղացիական մասսաներին դեպի նոր գրուներ, գեղի սոցիալիզմի կառուցման նորանոր հավթանակներ :

Խորհրդային Հայաստանը բոլորում է իր գոյության առաջին տասնամյակը այն ժամանակ, յերբ Խորհրդային Միությունը թեակախել է արդեն սոցիալիզմի շրջանը։ Խորհրդային Միության բանվոր դասակարգն անմիջական պայքար և մղում՝ վերացնելու համար դասակարգերը մեր յերկրում, կառուցելու համար անդասակարգ հասարակակարգ։ Լենինիզմի դրոշակը մասսաներն ամուր պահած հասցնում են աննախընթաց բարձրության։ Գաղափած դասակարգային թրչնամին հավաքում ու լարում է բոլոր ուժերը՝ իր համար որ հասական այս մարտում։ Կռասակցության և բանվոր դասակարգի առաջ ծառանում են աչքի լնկնող դժվարություններ։

Սակայն մենք անհողեսզդ կերպով, միշտ շարունակելով խորտակել դասակարգային թշնամու դիմադրությունը, հաղթահարելով մեր աճման դժվարությունները, առաջ կմղենք սոցիալիզմի ծավալուն հարձակողականը, կապահովենք մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման հարածուն վերելքը:

Մեր սոցիալիստական հայրենիքի հեղափոխական բաղկերկի անընդհատ ուժեղացող զարկն զգում ենք հենց նաև այստեղ՝ հեռավոր ու փոքրիկ Հայաստանում, մեր վերականգնվող ու զարգացող պղնձահանքերում, Զորագեսի և Քանաքեռի հոյակապ աշխատանքներում, տուփի և պեմզայի ընդարձակվող հանքերում, քիմիական արդյունաբերության բարձրացող գիգանտներում, տեքստիլի իլիկների յերգերում, կառուցվող անասնապահական խորհրդային տնտեսություններում, վոռոգման վիթխարի աշխատանքներում, վերափոխվող և նորաշեն մեր քաղաքներում ու գյուղերում։ Հայաստանի խորհրդայնացման յերկրորդ տասնամյակը սկիզբը կլինի նոր ու ավելի խոշոր, ավելի հոյակապ աշխատանքների ու կառուցմանների—Խորհրդային Միության սոցիալիստական վերակառուցման ընդհանուր ու միասնական պլանի սահմաններում։

Դաշնակներն արտասահմանում շարունակում են իրենց վայրահաջը։ Յեվ չեն կարող չշարունակել, քանի վոր այդպիսի պարտավորություն են վերցրել իրենց տերերի՝ իմպերիալիստների առաջ, նրանց սեղանի փշրանքներով կերակրվելու թույլտվության փոխարեն։ Մեր յերկրում իրենց վերջին հույսի ու հենարանի՝ կուլակության մոտալուս վերացումը խախտում է Դաշնակցության «Հարաբերական հավասարակշռությունը»։ Սակայն մյուս կողմից իմպերիալիստական պետությունների նոր թափ ստացած ուազմական պատրաստությունները Խորհրդային Միության դեմ՝ նոր «հույսեր» են ներշնչում «տղերքին»։ Դաշնակցական ճահիճը շարժվում է։

Թող դաշնակները շարունակեն իրենց միալար կոկործները։ Հայաստանի բանվորները դաշնականների հետ վեճի բռնվելու վոչ ժամանակ ունեն, վոչ ել տրամադրություն։ Վաղուց արդեն Հայաստանի բանվորների և գյուղացիների այս փոխերիմ թշնամիների դեմ, վորոնք իրենց դրոշակների վրա դրած ունեն մեր յերկրի գաղութացման ու ստրկացման լողունզը, մենք կիրառում ենք զենքի քննադատությունը։ Յեվ մեր զենքերը Դաշնակցության, ինչպես նաև բանվոր գասարգի ամեն տիպի և յերանգի թշնամիների դեմ, այս յերկրորդ տասնամյակին կլինեն ավելի հատու, ավելի սուր, ավելի անխնա...

Մեր շինարարության հաղթանակի և հոյակապ շինարարության յերկրորդ տասնամյակի շեմքին Խորհրդային Հայաստանի բանվորները և աշխատավորները միշտ ամուր և բարձր պահած լենինյան դրոշը, ե՛լ ավելի պիրկ կուրածնեն մկանները, կլարեն ուժերը, կանգ չեն առնի վոչ մի դժվարության առաջ՝ Խորհրդային Միության հերոսական պրոցեսարիատի ղեկավարությամբ ու նրա առաջին շարքերում մինչև հաղթական վախճանը հասցնելու սոցիալիզմի կառուցման հոյակապ աշխատանքներն ու վիթխարի մարտերը։

1980 թ. Նոյեմբեր.

Սոցիալիզմ կառուցող մեծ յերկրի անբաժան ջոկատը—
Խորհրդային Հայաստանն այսոր իր պայքարի, շնարարության և հաղթանակի 12-րդ տարին ե թևակոխում :

Լրանում ե 11 տարի այն որից, յերբ Հայաստանի բանգորադյուղացիական մասսաները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ջախջախիչ հարվածով խորտակեցին սնանկության ծայր աստիճանին հասած հայ բուրժուազիայի, նրա ղեկավար կուսակցության՝ Դաշնակցության կոչմարդային տիրապետությունը :

1920 թվի նոյեմբերի 29-ը մի հոյակապ դարագլուխ ե բաց անում Հայաստանի պատմության մեջ։ Այդ որը ցարական Ռուսաստանի ամենահետամնաց գաղութամասում, վորաբյունաների ավերակների կույտի յեր վերածվել իմանութեալիստների և նրանց հլու լակե՝ Դաշնակցության կողմից հառավիտալին ի սպաս բերած անլուր սխրագործությունների հետևանքով, Խորհրդային Հայաստանի ամուր հիմքն ե ԳԵՐ-վում։ Այդ որը Հայաստանի բղկտված աշխատավորությունը ծառանում է իր շահագործողների գեմ, միանում և պատմության առաջամարտիկներին, մտնում ե սոցիալիստական Հասարակակարգի ստեղծման համար վերջնական պայքարի յերած Ռուսաստանի բազմազգի պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության հերոսական շարքերը :

Հայաստանի բանվորագյուղացիական մասսաների մեծաղույն հաղթանակի—նոյեմբերի 29-ի տարելիցը լավագույն ասիթ ե Խորհրդային Հայաստանի պայքարի և նվաճումների

Հանրագումարները տալու համար : Ամեն տարի նոյեմբերի 29-ին հետադարձ ակնարկով մենք չափում ենք անցած ճանապարհը, կշռում ենք մեր նվաճումները, վեր հանում թերություններն ու պակասները և ընդզում իրենց լուծմանն սլասող մարտական խնդիրները : Սոցիալիստական պայքարի և աշխատանքների դորատեսն ենոյեմբերի 29-ը, մասսաների հեղափոխական նոր զորահավաքի որը, յերբ սոցիալիզմի կառուցման գործին լծված բանակներն ավելի մեծ թափ և յեռանդ են ստանում՝ ծավալելու համար հարձակումը, շարունակելու համար անշեղ վերելքի ուղին : Խորհրդային Հայաստանի սոցիալիստական շինարարության առաջին տարիներում, մեր առաջխաղացումն ու նվաճումները գնահատելիս՝ սովորաբար համեմատության համար չափանիշ եր ընդունվում այն «ժառանգությունը», վոր մնացել եր խորհրդային իշխանությանը Հայաստանի բուրժուական որապակաս «Հանրապետության» անիառունակ վախճանից հետո : Այսոր, տակայն, անկիրառելի յե գնահատության նման յելակետը : Այնքան հոյակապ ե Խորհրդային Հայաստանի վերելքը և այնքան բովանդակալից տասնեմեկամյա պայքարն ու շինարարությունը, վոր անհնար ե և անիմաստ վորեե համեմատություն մեր տնտեսական և կուլտուրական շինարարության ներկա դրության և նախախորհրդային անցյալի միջեւ : Սոցիալիզմի կառուցման ամեն մի ամիսը, ամեն մի տարին լայնացնում ե այն վիճը, վոր ձգվում ե Խորհրդային Հայաստանի տնտեսական-կուլտուրական վերելքի և դաշնակների իշխանության մղձավանջային շրջանի միջեւ : Մի հանգամանք, վոր միաժամանակ մեր կուսակցության լենինյան աղդային քաղաքականության փայլուն հաղթանակն ե մատնանշում : Ի՞նչպես կարող ե Մերձավոր Արևելքի նախադուանը գտնվող Խորհրդային Հայաստանն իր սոցիալիստական բուռն վերելքով հեղափոխականացնող խոշոր գործոն չհանդիսանալ իմ-

պերիալիստական բորենիների գարշապարի տակ հեծող գաղութների ու կիսադաղութիների համար : Հենց այսոր, յերբ սյստեղ՝ ճապոնական իմպերիալիզմի գիշատիչ վամպիրներն լրենց ճանկերի մեջ արյունաքամ են անում Զինաստանը, այսուեղ սիստեմատիկորեն աճում և զարգանում ե, Խորհրդային Հայաստանը, յերբեմնի դանտեական գիտութը :

1931 թիվը, — Խորհրդային Հայաստանի 11-րդ տարին, — անցավ նոր նվաճումներ դարբնելու նշանաբանի տակ : Խորհրդային Հայաստանի 11-րդ տարին՝ կուսակցության գլխավոր գծի համար մղվող պայքարի հիման վրա՝ սոցիալիզմի դիրքերի հետագա ամրացման, սոցիալիստական լայնածագալ, ընդհանուր հարձակողականի տարին հանդիսացավ :

Հսկայական քայլերով առաջ լնթացավ մեր յերկրի սպազմական ինդուստրացումը : Կարծ ժամանակ ե միայն տեղ անջատում Զորագեսի ավարտումից, Ղարաքիլսայի քիչիական գործարանը և Դավալուի ցեմենտի գործարանն աշխատանքի զնելուց : Միայն այս յերեք հսկաների շարքի մանելը նոր հեղաշրջում ե առաջացնում առանց այն ել մեծ տեղաշարժերի յենթարկված մեր ժողովրդական տնտեսության մեջ : Փաստ չե՞մ միթե, վոր սոցիալիստական արդյունաբերության տեսակարար կշիռը գնալով ավելի և ավելի յե բարձրանում Խորհրդային Հայաստանում : Արդյունաբերության արտադրանքը, վոր դեռ 1927 թվին կազմում եր ժողովրդական տնտեսության լնդհանուր արտադրանքի 23 տոկոսը միայն, 1930 թվին հասավ 38-ի, իսկ այս տարի՝ 45 տոկոսի : Հիմնական ներդրումները ժողովրդական տնտեսության մեջ այս տարի կրկնապատկվեցին անցյալ տարվա համեմատությամբ՝ հասնելով 134 միլիոն ռուբլու : Արդյունաբերության արտադրանքը նույնպես կրկնապատկվեց այս մի տարվա լնթացքում :

Եերկրի ինդուստրացման զուգը լնթաց աճում, ամրանում և կոփվում են պրոլետարիատի շարքերը : Արդյունաբերության

և շինարարության մեջ տրանսպորտի վրա այսոր աշխատում
են 40 հազարից ավելի բանվորներ, 1927 թվի 17 հազարի փո-
խարեն, չհաշված գյուղատնտեսական բանվորների 22,000-ա-
նոց աճող բանակը:

Սակայն ինդուստրացման Փրոնտում ավելի հոյակապ,
վիթխարի հաղթանակները գեռ մեր առաջն են, զորոնց
սերտորեն կապված են դժվարությունների բայլշկիլյան հաղ-
թահարման, յեղած նեղքվածքների վերացման հետ: 1931 թր-
վը նույնպես անցնում է պղնձարդյունաբերության պլանների
զգալի թերակատարում տալով: Այժմ թերակատարում է պլա-
նը նաև մեր արդյունաբերության ամենամեծ միավորը՝ Լե-
նինականի տեքստիլ գործարանը: Անրավարար են նույնահա-
նոր շինարարության տեմպերը, մանափանդ շրջանային կենտ-
րոնների շինարարական միավորումներում: Մենք գեռ չենք
կարողանում ոգտագործել մեր պլանային աշխատանքի բոլոր
հնարավորությունները, մենք գեռ բավական չափով չենք
վերակառուցվել նոր պայմաններում նոր ձեռվ ղեկավարելու
համար: Այդ ե պատճառը, վոր մեր արդյունաբերության
առաջավոր ճյուղերի՝ պղնձարդյունաբերության և տեքստիլի
բանվորները դիմավորում են նոյեմբերի 29-ն անբավարար,
ամոթալի արդյունքներով: Ահա թե ինչու նոյեմբերյան մեր
առաջին և մարտական լոգունդն ե՝ դուրս բերել պղինձն ու
տեխստիլը խրնիկական նեղքվածքների խայտառակ դրու-
թյունից: Հայաստանի բանվորները և կոլտնտեսականները
սպասում են Ալլահվերդու և Ղափանի լեռնադորձներից,
Լենտեքստիլի բանվոր-ուհիներից աշխատանքի ավելի՛ բարձր
տեմպ, ավելի՛ ամուր կարգապահություն, ուժերի և յեռան-
դի նոր լարումն: Հայաստանի բանվորները և կոլտնտեսա-
կանները պետք ե պահանջեն իրենց բոլոր կաղմակերպու-
թյուններից ավելի մոտ կապ, ավելի՛ լայն ուշադրություն և
աշակեցություն Ալլահվերդուն, Ղափանին, Տեքստիլին:
Կսել հաղթանակի 12-րդ տարին առանց ճեղքվածքի, առաջ-

նորդի վեց շուցումների անշեղ կիրառման հիման վրա ամ-
րացնելով բեկումը և ապահովելով պլանների անթերի կատա-
րումը, —ահա նոյեմբերյան մեր առաջին պահանջը:

Խորհրդային Հայաստանի 11-րդ տարին նշանակալից ե
նաև պատմական այս նվաճումներով, վոր ձեռք բերին Հա-
յաստանի բանվորությունը և աշխատավոր գյուղացիությունը
զյուղի սոցիալիստական վերակառուցման բնագավառում:
Սնցյալ տարիվա 380 կոլտնտեսությունների փոխարեն մենք
ունենք 900-ից ավելի կոլտնտեսություններ, վորոնք ընդգրո-
կում են մեր աշխատավոր գյուղացիության մոտ 40 տոկոսը:
Անընդհատ խորանում է աշխատավոր գյուղացիության մաս-
սայական շրջադարձը դեպի սոցիալիզմը: 40-ից ավելի մեր
խորհրդատեսությունները հսկայական խթան են հանդիսանում
մեր գյուղատնտեսության արտադրական ուժերի արագա-
ւեմպ բարձրացման համար: Լայնանում ե մեքենա-տրակտո-
րային կայանների ցանցը, մշակվում են՝ վոռողման միջոցով
անջրդի անապահներից խլված՝ նորանոր հողամասեր:

Մեր նվաճումները, սակայն, գյուղի սոցիալիստական վե-
րակառուցման բնագավառում ե՛լ ավելի նշանակալից կլինե-
լին, յեթե չկատարվելին մի շարք կոպիտ սիսաներ և կու-
սակցության գծի աղավաղումներ գյուղացիական քաղաքա-
սականության բնագավառում: «Անդրյերկոմը և աղքային կոմ-
իանության բնագավառում»: Կուսակոմները, —նշեց իր հայտնի վորոշման մեջ մեր
կուսակոմների կենտրոնները, —նշեց իր հայտնի վորոշման մեջ մեր
կուսակցության լենինյան շտաբը, —նշանակալից աշխատանք
ծավալելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակա-
ռուցման ուղղությամբ, ընդդրկել են աշխատանքի առավելա-
պես տեխնիկական կողմը, չեն ապահովել գյուղացիության
(չքավոր-միջակ մասսաների) քաղաքական ճիշտ ղեկավարու-
թյունը»: Մեր մի շարք կաղմակերպությունների պրակտիկան
գես տեխնիկական աշխատանքներում ամբողջապես հաստատում ե
գյուղական աշխատանքներում: Հենց նորերս կրկին հայտաբերվե-
ցին մեր մի շարք շրջաններում (Աշտարակ, Ապարան և այլն).

ինչպես նաև կենտրոնական միքանի որդանների աշխատանքներում, կոլտնտշինարարության և մթերումների բնադավառում կուսակցության քաղաքականության խախտման և աղավաղումների բաղմաթիվ գեպքեր: Այդ պատճառով գյուղական աշխատանքների առաջիկա շրջանի հիմնական խնդիրը պետք է համարել բայց կելքային պայքարի ծավալումը աջ և «ձախ» թեքումների ամեն մի արտահայտությունը տեղնուտեղն արմատախիլ անելու, կուսակցության ճիշտ գեկավարությունը գյուղացիության (չքալոր-միջակ մասսայի) նկատմամբ ապահովելու համար:

Նոյեմբերյան հեղափոխության 12-րդ տարումն առ, — ավելի քան մինչեւ այժմ—գյուղը պետք է մնա մեր աշխատանքների և ուշադրության կենտրոնում: Ուրիշ կերպ չի ել կարող լինել, վորովհետեւ աչքի ընկնող ծավալի հասցնելով կոլտնտշարժումը, մենք դեռ հոկայական անելիքներ ունենք կաղմակերպված կոլտնտեսությունների իրական ամրացման աշխատանքի կաղմակերպման, արտադրողականության և բերքատվության բարձրացման բնադավառում: Բամբակահավաքի ընթացիկ կամունիայի անբավարար պատկերը միթե չի ապացուցում, վոր մեր կոլտնտեսությունները, նույնիսկ լավագույն շրջաններում, թերացել են և թերանում են իրենց ամենակարևոր աշխատանքներում: Բամբակի բերքատվության ընդունված նորմաների թերակատարումը միթե չի բացատրվում առաջին հերթին նրանով, վոր կոլտնտեսություններն այս տարի վատ կաղմակերպեցին բամբակի մշակման գործը: Բամբակի և այլ մթերումների գծով միշտ կոլտնտեսությունների անթույլատրելի թերացումը ցույց է տալիս, թե ինչպես վորոշ կոլտնտեսություններում տեղ են գտնում բուրժուական-կույակային աղդեցությունները, կորողական-սպառողական տրամադրություններ, աշխատանքի թույլ կարգապահություն, գործալքում: Այս ամենը գալիք է հաստատելու, վոր իսկապես չկա այսոր ավելի

կարևոր խնդիր մեր գյուղական կազմակերպությունների համար, քան թե ուղղել մի շարք շրջաններում կոլտնտեսության շարժման ասպարեզում թույլ տրված սխալները և կենտրոնացնել զանկերը կոլտնտեսությունների կազմակերպական, տնտեսական և ֆարմացիական ամրացման համար: Կոնկրետ մոռացում բոլոր շրջաններում յուրաքանչյուր կոլտնտեսությանը, հատկապես մշակված և անհապաղ գործադրվող միջոցառումներ նրա ամրացման համար, վոչ թե խոսքով, այլ գործով վճռական պայքար սպառողական տրամադրությունների գեմ, կոլտնտեսությունների առաջ գրված պարտականությունների լրել կատարում, — ահա նոյեմբերյան մեր պահանջները շրջանային կուսակցական, խորհրդային և կոլտնտեսական կազմակերպություններից:

Մեր հաջողություններն ու նվաճումները ձեռք են բերված վոչ թե «խաղաղ» աշխատանքի պայմաններում, այլ արդյունք են անընդհատ պայքարի, պայքար՝ կապիտալիստական եկամենտերի մնացորդների գեմ մեր յերկրում, Հայաստանի աշխատավորության ամենավոլսերիմ թշնամուղանակների գեմ, պայքար՝ յերեմն կեղծ բարեկամի փետուրներ հազար մեր այլ տիպի հակառակորդների գեմ, պայքար՝ դասակարգային թշնամուղան գործակալության՝ ուղորդունիղմի, նացիոնալ-ուկրունիղմի գեմ սեփական շարքերում: Եել մեր պայքարը թշնամուղան բոլոր գծերով ել ավելի ծավալուն, շեշտակի և ակտիվ պիտի դառնա Խորհրդային Հայաստանի 12-րդ տարում, հնդամյակի ավարտման տարում, վորպես սոցիալիստական հարձակողականի ավելի լայն ծալաշման և նոր նվաճումների հաստատուն յերաշխիք:

Իմպերիալիստների գործակալ դաշնակների մամուլն արտասահմանում շարունակում է իր միալար վնդստոցը: Հավատարիմ իրենց դասակարգային եյությանը, հավատարիմ իրենց կերակրող տերերին՝ դաշնակները շարունակում են իրենց դավագրություններն ու մեքնայությունները Խորհրդա-

յին Հայաստանի դեմ : 1918—20 թվերի հակախորհրդային ինտերվենցիային նրանք իրենց մասնակցությունը բերին վորած Դենիկինի և Վրանդելի դործակալներն ու դաշնարկիցները : Խորհրդային Հայաստանի կառուցման առաջին իսկ քայլերից՝ 1921 թվի փետրվարյան ավանդուրայից մինչև մեր որերը նրանք միշտ ել յեղել են, —և չելին կարող չլինել, — հակախորհրդային ինտերվենցիայի պատրաստման առաջավոր գիրքերում : Պատմության անկիլի ընթացքի արագացումն այսոր առաջ ե մզում նաև արտասահմանյան հայ աշխատավորության դասակարգային գիտակցության բարձրացման պրոցեսը՝ կատաղության նոր գալարումներ ե առաջ բերում դաշնակների նոսրացող շարքերում : Կորչում ե դաշնակների վորի տակի հողը : Պատահական չե, վոր Հայաստանի խորհրդայնացման 12-րդ տարեդարձին զուգադիպում ե դեպի խորհրդային հայրենիքը՝ ներգաղթող տարադիր հայ աշխատավորների առաջին յերամի կաղմակերպումը : Դաշնակները մեր հաղթական առաջնորդացի դիմաց վնասում և ատամներ են կրծատացնում : Խորհրդային Հայաստանի բանվորներին ու աշխատավորներին այդ վոչ զարմացնում ե և վոչ ել սարսափեցնում : Նրանք ավելի բարձր գդաստությամբ ու աչալրջությամբ տեղնուտեղը կհայտաբերեն ու կջախջախեն դաշնակների յուրաքանչյուր վորձը՝ խանդարելու մեր սոցիալիստական վերելքը :

Բայլշեկիյան յեռանդով ե վճռականությամբ մինչև վերը պետք ե ուղղել լենինյան կենտրոնական շտարի հայտաբերած սխաները մեր աշխատանքներում և կատարել նրա մարտական ցուցումները : Դրան զուղընթաց մեր հարվածները դաշնակներին պետք ե դառնան ավելի շեշտակի և կործանիչ, մեր կրակը՝ դասակարգային թշնամու վրա՝ ավելի անվերեալ :

12-րդ տարին ե, ինչ վարում ե Համեկոմկուսի ջոկատը՝ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը Խորհրդային

Հայաստանի պայքարի և շինարարության ղեկը : Նա աճում է անընդհատ ու կովկում դասակարգային պայքարի հնոցում, լենինյան կուսակցության կենտրոնական շտարի ղեկավարությամբ : Մեր շարքերն են ղիմում Հայաստանի յերիտասարդ բանվորության լավագույն կադրերը՝ հարվածային պրոլետարները, գյուղում՝ կուլակի ղեմ պայքարում փորձված ու կոփած առաջավոր կուտնասականները : Խորհրդային Հայաստանի 11-րդ տարին տվյալ մեր կուսակցությանը 5000 նոր մարտիկներ : Մեր հեղափոխության 12-րդ տարին Հայաստանի կոմունիստական կուսակցության համար պիտի լինի հետագա աճման, բայլշեկիյան կուսակցության և կոփածության ամրացման, անդիսցիպլինարության և խմբակայնության բոլոր արտահայտությունների խաղառ վերացման տարի :

Խորհրդային Հայաստանի 12-րդ տարին Անդրկովկասյան Սոցիալիստական ֆեղերացիայի առաջին տասնամյակի տարին ե : Նա սիրտի ընթանա նշանաբան ունենալով լենինյան կուսակցության ազգային քաղաքականության գծով կատարված սխաների իսպառ վերացումը, ալզա ուրեմն հանրապետությունների ինքնազորդունելության և տնտեսական նախաձեռնության ապահովումը և այդ հիման վրա Անդրկովկասյան ֆեղերացիայի՝ լենինյան ազգային քաղաքականության այդ լավագույն մարմնացումի հետագա ամրապնդումը :

Խորհրդային Հայաստանի 12-րդ տարին հնդամյակի ավարտման տարին ե : Հայաստանի բանվորության և աշխատավորության համար նա պիտի լինի լենինյան կենտրումի բոլոր գիրեկտիվների անշեղ իրազործման, բայլշեկիյան տեմպերի լայն ծավալման, բոլոր ճեղքվածքների վերացման, հնդամյակը չորս տարում ավարտելու տարի, սոցիալիզմի նոր մարտերի, նոր հաղթանակների տարի :

Աշխարհի մեկ վեցերորդ մասում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի 15-րդ տարին ևս բոլորվեց։ Շուտով լրանալու յե նաև մեծ Հոկտեմբերի ծնունդ՝ կարմիր Նոյեմբերի—Հայաստանի խորհրդայնացման 12-րդ տարին։ Տասնհինգ տարի։ Բայց ի՞նչ հոկայական տարածություն ե կտրել և անցել պրոլետարական դիկտատորայի յերկիրը հեղափոխության վերելքի ուղիներով։

1917թ. հոկտեմբերին Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատը բայլը իկան կուսակցության, նրա առաջնորդի—պրոլետարական հեղափոխության մեծ ու հմուտ ստրատեգի զեկավարությամբ, ջախջախիչ հարվածներով տապալեց բուրժուադիայի իշխանությունը և պրոլետարական դիկտատորայի անսասան հիմքը դրեց։ 1917թ. հոկտեմբերը յելնող նոր աշխարհի գոտեմարտի ձեռնոցն եր՝ նետված հին, խարխլված աշխարհին, մարդկության վերջնական ազատագրության փարուսը։ 1917թ. հոկտեմբերին եր, վոր պատմության դեկը մեր յերկրում անցալ բանվոր դասակարգի ձեռքը։ Յեկ տասնհինգ տարի, լենինյան կուսակցության զեկավարությամբ, բանվոր դասակարգը վարում ե մեր լայնածավալ յերկրի սոցիալիստական առաջընթացը, վերելքից՝ վերելք, հաղթանակից՝ դեպի հաղթանակ։

Ռուսաստանի պրոլետարիատը, շեշտում եր լենինը, —եր հեղափոխության մեջ հոկայական բարձրության հասալ վոչ միայն 1789 և 1793 թվերի համեմատությամբ, այլ նաև 1871 թվի համեմատությամբ։ Հոկտեմբերյան հեղափոխության

քառամյա տարեղաբն նվիրված հոգվածում նա գրում եր՝
«Մենք հասցընք բուրժուական դեմոկրատական հեղափոխությունը մինչև վերջը, ինչպես վոչ վոք, մենք միանգամայն զիտակցաբար, հաստատուն և անշեղ կերպով շարժվում ենք առաջ գեղի սոցիալիստական հեղափոխությունը, իմանալով, վոր նա չի բաժանված չինական պարիսպներով բուրժուական դեմոկրատական հեղափոխությունից, իմանալով, վոր միայն պայքարը կլուծի, թե վորչափ մեղ կհաջողվի (վերջին հաշվով) առաջ գնալ, թե անհունորեն բարձր ինդրի վոր մասը մենք կհատարենք, թե մեր հաղթությունների վոր մասը կամրջնեղ մեղ համար : Կապընք՝ կտեսնենք» :

Մեծ ուսուցիչը չապրեց, վորպեսի տեսներ, թե ինչպես անշեղ ընթանալով նրա հանճարով գծված ճանապարհով, չորհրդային Միության պրոլետարիատը հաջողությամբ իրագործում է այսոր վոչ միայն «անհունորեն բարձր ինդրի մի մասը», այլ այդ խնդիրն իր ամբողջությամբ, թե ինչպես պրոլետարիատական հեղափոխությունը կիզ մատեցել է այսոր իր հիմնական խնդրի լուծմանը՝ ձեռնարկելով յերկրորդ 5-ամյակում անդասակարգ սոցիալիստական հասարակակարգի կառուցման ավարտումը : Տանհինդ տարի : Ինչքան արագ է յեղել պատմության չափանիշով համեմատաբար կարճ այս ժամանակաշրջանում սոցիալիստական հեղափոխության լոկոմոտիվի վաղքը :

Ուստաստանի բանվոր դասակարգը պատմության մեջ իրենց սրությամբ աննախընթաց քաղաքացիական կոխիներից դուրս յեկավ հաղթանակով : Նա «քուրժուական դեմոկրատական հեղափոխությունը «կատարեց-պրծավ» այնպես «մաքուր» կերպով, ինչպես դեռ յերբեք աշխարհում : Ամենառեակցիոն իմպերիալիստական պատերազմից նա յելք դտավ հեղափոխական ճանապարհով : Նա ստեղծեց պետության խորհրդային տիպը և դրանով իսկ բաց արեց համաշխարհային պատմական նոր գարաքշանը, վոր յեկել ե փոխարինելու

բուրժուադիայի ակրագետության դարաշրջանին» : Այսպիս եր դնում ինդիրը Լենինը 1922 թվին : Բայց նա միաժամանակ ընդգծում եր, վոր դեռ մնում է «վերջին և վնասական մարտը» ուստական կապիտալիզմի դեմ, այն կապիտալիզմի, վոր «ամեն որ, ամեն ժամ և ամեն վայրկյան» անում է մասն գյուղացիական տնտեսությունից : «Ահա այսուել, — նախազգուշացնում եր մեծ ուսուցիչը, — մեղ ամենամերձավոր ապագայում ճարկատամարտ և սպասում» :

Խորհրդային Միությունը վերականգնելով իմպերիալիստական բուրժուազիայի քաղաքականությամբ ծայր աստիճանի քայլագայլած ժողովրդական տնտեսությունը սոցիալիստական հիմունքներով, ամեն կերպ զարկ տալով արդյունաբերության զարգացմանը, թեակոխեց սոցիալիզմի շրջանը, կարողացավ անցնել և անցավ իր աշխատանիքի ու պայքարի նոր ետապին : Որպես կարգում դրվեց պրոլետարիատական հեղափոխության ամենագլուխը հարցը — մանր դյուղացիական տնտեսությունների սոցիալիստական ունկնաստրուկցիայի խնդիրը :

Բանվոր դասակարգը՝ յերկարամյա պայքարներում կոփված իր կուսակցության, լինինյան առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ ձեռնարկեց «վերջին վճռական մարտին ուստական կապիտալիզմի դեմ» : Յեկ ահա մենք այժմ դիմավորում ենք 15-րդ Հոկտեմբերը՝ տանելով այդ մարտում վիճական հաղթանակներ : Կուսակցության գլխավոր գծի անշեղ կիրառումով, յերկրի ինդուստրացման հաստատում քաղաքականությամբ ամրացնելով սոցիալիստական ծավալուն հարձակման դիրքերը և առաջ բերելով բեկում գյուղի մասնակի մեջ զեղի սոցիալիզմի ուղին՝ մենք գյուղատնտեսության կուեկտիվացման հիման վրա ավարտեցինք հիմնական շրջաններում կուլակության լիկվիդացիան :

Պրոլետարական հեղափոխությունը վերածեց նախկին միջազգային ժանդարմը, աղջերի և ժողովրդական բանտը՝

ցաբական Ռուսաստանը, պատմության ամենաառաջամարտիկ յերկրի, աշխատավոր մարդկության հույսի, նոր աշխարհի համար պայքարող միլիոնների դրոշի: Արտադրական ուժերն աճում են պատմության մեջ աննախընթաց տեմպերով: Գյուղական Ռուսաստանը վերածվել և վերածվում ե առաջավոր ինդուստրիալի յերկրի: Մեկը մյուսի հետեւից գործարկվում են ինդուստրիալ հոկաններ, շարք են գրավում վիթխարի նորակառույցներ, նոր յերկաթուղագծերը, ճանապարհները, ջրանցքները կապում են լայնածավալ Միության բոլոր անկյուններն ու ծայրամասերը: Բավական ե ասել, վոր Խորհրդային Միության արդյունաբերությունն իր ընդհանուր արտադրանքով յերեք անգամ աճել ե նախապատերազմյան մակարդակից: Զափազանց խոչոր հաջողություններ ունենք բուրժուական յերկիրներից ունեցած տեխնիկական տնիսական կախումից ազատագրելու և ժամանակակից ամենաառաջավոր տեխնիկային տիրապետելու ասպարեզում:

Ամրանում ե կրտսեսային գյուղը: Մանրագույն, ցիրուցան 25 միլիոն անհատական տնտեսությունների հին, հետամնաց գյուղը տեղի յի տվել կոլեկտիվացած նոր առաջավոր գյուղին: Խորհրդային Միությունը վերածվել ե ամենախոշոր գյուղատնտեսական միավորներ ունեցող յերկրի՝ ամբողջ աշխարհում: Այժմ արդեն խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները գերակշռող տեղ են գրավում՝ տալով գյուղատնտեսական արտադրանքի հիմական մասը: Այդպիսով Խորհրդային Միությունը վերջնականապես և անդանալի կերպով հաստատվել ե սոցիալիզմի ուղիների վրա: Սոցիալիստական սեկտորն անխստիր ժողովրդական տնտեսության բոլոր բնադրակառներում վճռական դիրքեր ե դրավել, ավարտված ե սոցիալիզմի հիմքի կառուցումը, «ով ում» հարցը լուծված է թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության մեջ:

Նրանց մոտ և մեզ մոտ: Կուսակցության 16-րդ համառումարում ընկ. Ստալինը դնելով այդ հարցը՝ ձևակերպում

եր գոյացություն ունեցող սուր կօնտրաստը յերկու աշխարհների, յերկու բևեռների միջև: Յեզ այսոր այդ կանորաստը շարունակ ավելի ու ավելի յի շշտվում, գունեղանում: Սոցիալիստական Դնեպրոստրոյների լուսարձակն ե բոցավուվում այն մուայլի ու խավարի հանդեպ, վոր տիրում ե կարմիր գծից դուրս վող կապիտալիստական աշխարհի յերկնակամարում: Եյնտեղ համատարած կրիզսի, միլիոնների ու տասնյակ միլիոնների սովոր թշվառություն, գործազրկություն, տնտեսական կյանքի լիակատար վիլուզում, բարքերի այլանդակում, վայրենացում: Եյնտեղ անընհատ տնտեսական աճում և կուշտուրական առաջխաղացում, արտադրական ուժերի բուռն վերելք: Այնտեղ կապիտալիզմի որիան ու մայրամատքը: Քարը քարի վրա չմնաց կապիտալիզմի հարաբերական ու ժամանակի ստարիելիզացիայից, և անընդհատ աճում են հեղափոխական կրիզսի նախադրյաները մի շարք յերկիրներում: Այնտեղ՝ սոցիալիզմի արշալույսը, նոր հասարակակարգի ամբացումը:

Ահա թե վորպիսի հաղթական բարձունքների վրա յե գիտավորում 15-րդ Հոկտեմբերը մեր յերկիրը, միջազդային պրոլետարիատի հեղափոխական հայրենիքը: Հետ ու հարթ չի յնդել այդ բարձունքների ծանապարհը, այլ նրանք գրավված են կատաղի պայքարով, պայքարով՝ իմպերիալիզմի դեմ, նրանց գործակալության, հակահեղափոխական տրոցիկիզմի, ներկա շրջանի զլխավոր վտանգ՝ կուլակային ռեսսավարության աջ թեքման, հաշտվողականության, լիբերալիզմի դեմ:

Մեծ հեղափոխության խոշորագույն արդյունքներից մեկը՝ ազգային հարցի միակ արմատական լուծումը—նրա պրոլետարական լուծումը հանդիսացավ: Հոկտեմբերն իրադորեց լենինյան աղդային քաղաքականությունը. նա մի հարվածով վիշտեց աղդային ճնշման ու սորկացման այն շղթաները, վորոնց մեջ պահում ելին տարիներ ու դարեր շարունակ ցարա-

կան Ռուսաստանի կալվածատերերը և կառիտալիստները «փոքր» ժողովուրդներին «Հայրենական» շահագործողների ողնությամբ և անմիջական մասնակցությամբ. նա խնդիր դրեց փաստականորեն վերացնել այն անհավասարությունը նախկին տիրող և ճնշված աղջությունների միջև, վոր արդյունք եր ցարական ազգային քաղաքականության: Հոկտեմբերը Խորհրդային Միության բոլոր ազգերի համար իրական ագատուրյան և անկախության, տնտեսական ու կուլտուրական անկաղականդ գարգացման պայմաններ ստեղծեց: Պրոլետարական հեղափոխության 15 տարին նախկին ճնշված ազգությունների և ժողովուրդների տնտեսական, կուլտուրական չտեսնված վիրելքի շրջանը յեղավ: Ապացույց՝ Խորհրդային Միության տասնյակ ազգային հանրապետությունների ու մարզերի վերելքը:

Վերցրեք Հայաստանը—ցարիզմի այդ ամենահետամնաց զաղություններից մեկը: Վորքան կերպարանափոխվել, վորքան անձանաչելի յև դարձել նա իր հաղթական առաջընթացի մեջ:

Հայաստանի բանվորա-դյուռապահական մասսաները 1920 թվի նոյեմբերին հիմնահատակ կործանեցին այն արհեստական խարիսուլ պատմելը, վոր ձգտում ելին կանգնեցնել հայ բուրժուազիան, նրա կուսակցությունները՝ անջատելու համար մեր յերկիրը պրոլետարական հեղափոխությունից, չարձնելով այն իմպերիալիստների գաղութային ստրկացման որյեկտ: Հոկտեմբերյան հեղափոխության ալիքները սրբեցին, մաքրեցին մեր յերկիրը բուրժուական դաշնակցական աղոթից, նրանք կենսարար ուժ ներշնչեցին արյունաքամ յեղած մեր մասսաներին:

Հոկտեմբերյան հեղափոխությունը, այդպիսով, յեկավ վճռելու նաև «Հայկական հարցը»: Մեր ուսուցիչ Ենգելսը գրում եր. «Իմ անկեղծ կարծիքը, վորպես մասնավոր մարդու, այն ե, վոր Հայաստանի աղատաղրումը տաճիկներից և սուսներից հնարավոր կլինի այն պահուն, յերբ

սուսական ցարիզմը»: Մյուպես ել յեղալ: Ի՞նչ եր հայկական հարցն իմպերիալիստների համար: Նրանց՝ գեղի Արևելք տուաջիսաղացման մի ղատրիվակ, Թյուրքիայի բաժանման և գաղութացման միջոցներից մեկը: Ի՞նչ եր հայկական հարցը հայ բուրժուազիայի, շահագործող դասակարգերի համար: Իմպերիալիստական չուկաներում աճուրդի մի առարկա՝ հայ, թուրք և քյուրդ աշխատավորների վոսկրների վրա սեփական տիրապետություն հաստատելու համար: Ի՞նչ եր հայկական հարցը մեր յերկրի աշխատավորական մասսաների համար: Ցարական և սուլթանական լուծի թոթափումը, գասակարգային և աղջային շահագործման վոչնչացումը, մեր յերկրի աղատ, իմպերիալիստներից անկախ, քաղաքական, տնտեսական ու կուլտուրական վերելքի նախապայմանների ստեղծումը՝ աղջայից խաղաղ պայմաններում: «Հայկական հարցը» իսկական լուծումը բերեց, այդպիսով, պրոլետարական հեղափոխությունը:

12 տարի յե անցել հեղափոխության հաղթանակից հետո Հայաստանում: Տասերկու տարի: Բայց ինչեր են անցել զարձել մեր յերկրում այդ ժամանակաշրջանում: Իմպերիալիստների և նրանց գործակալների վոճրագործ քաղաքականության չորոշիվ քանդված ու ավեր գյուղախմբերի խղճուկ կույտը՝ նախախորհրդային Հայաստանը վերածվել ե այսոր առաջալոր խորհրդային հանրապետության իր մեծ թափով աճող արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ:

Միթե փաստ չէ, վոր նախապատերազմիան մակարդակի համեմատությամբ (զաշնակցական տիրահաչական տության շրջանի հետ համեմատվելն իսկ ավելի քան անհարմար ե) մեր արդյունաբերության ընդհանուր արտադրանքը բարձրացել ե ավելի քան 7 անդամ:

Յերբեմնի նահատպետական, աղքատիկ Հայաստանը հաստատուն կերպով բռնել ե ինդուստրիալ-աղբարային յերկրի վերածվելու ուղին:

Մեծ զարկ ե ստանում պղնձի արդյունաբերությունը—
Ազգարակի նոր հայտաբերած հանքերի հետախուզումն ու շա-
հագործումը դնում է մեր յերկիրը պղնձարդյունաբերության
ամենաառաջնակարգ յերկիրների շարքը։ Զարգանում է տեքս-
տիլ արդյունաբերությունը, շինանյութերի արտադրությու-
նը, քիմիան։ Ավելի ու ավելի խոտանում է ելեկտրական եժա-
նագին ուժի ցանցը մեր յերկրում։ Տասնհինգերորդ Հոկտեմբերը դիմավորում ենք՝ դորձարկելով Զորագեսը և Յե-
րեանի ջրաելեկտրոկայանը, արագացնելով Քանաքեռդեսի
կառուցման աշխատանքները։ Մեր յերկրի ամենահետամնաց
անկյունները կապվում են կենտրոնների հետ յերկաթուղու-
ցանցով—Արթիկից հետո ուելուերը զնդում են այսոր Զանգե-
զուրի կիրճերում։ Բարձրանում են բանվորական նոր ավան-
ները—Ղափանն ու Ալլահվերդին, քաղաք ե դառնում մայրա-
դյուղ Յերևանը։

Հարվածային տեմպով առաջ ե գնում անջրդի տարածու-
թյունների վոռոգման դժվարին, բայց մեծ գործը։ Տրակտոր-
ներն են ակոսում մեր դաշտերի զգակի մի մասը։ Արարատյան
դաշտի դեռ յերբեք չվարկած խոպանները հերկվում են ելեկ-
տրոգութանով։ Յեկայտ ամենի Փոնի վրա ծավալվում ե
դյուղի սոցիալիստական սեկտորը, աճում են ու ամրանում
են խորհանտեսություններն ու կոլտնտեսությունները։ Վեր-
ջիններս այժմ ընդգրկում են գյուղական տնահետությունների
ընդհանուր քանակի 37 տոկոսը։ Տնտեսական շինարարության
հաստատուն հիմքերի վրա վոսկեդարի շրջան և ապրում մեր
կուլտուրան։ Պարտադիր հանրային կրթություն, անդրագի-
տության խսպառ վերացում, լայն հրատարակչություն։ Տաս-
նյակ հազարավոր պատանիներ ու յերիտասարդներ մայրենի
լեզվով տիրանում են տեխնիկայի և գիտության ամրոցնե-
րին։ Սեփական թատրոն, կինո, ոպերա, բանվորական ա-
կումբներ, սահմանադրիաների և հանգստի տների հետզհետե-
լայնացող ցանց։

Այսուղիսի բուռն թափով սոցիալիստորեն վերակատաց-
վող Հայաստանը չի զանում ողնության ձեռք կարկառել իմ-
պերիալիստական քաղաքականության և դաշնակցական ա-
վանություրիզմի զոհ՝ արտասահմանյան հայ աշխատավորու-
թյանը՝ մաս առ մաս տեղավորելով նրան խորհրդացին հայ-
րենիքում։

Ահա թե ինչով ենք դիմավորում 15-րդ Հոկտեմբերին—
12-րդ Նոյեմբերին։

Այս հոյակապ նվաճումները ձեռք են բերված մեծապե-
տական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ անխնա
պայքարով, Անդրկովկասյան Ֆեղերացիայի անշեղ ամրա-
պնդման եխման վրա։ Միայն կուսակցության լենինյան աղ-
դային քաղաքականությունից զլուխ չհանողները կամ այն
խեղաթյուրողները կարող են մեխանիստորեն հակադրել
առանձին ազգային հանրապետությունների ինքնագործունե-
յության ծավալումը Մնդրկովկասյան Ֆեղերացիայի ամրա-
պնդմանը։ Միայն նրանք կարող են անդիտունալ կամ անտե-
սել, վոր այդ խնդիրները շաղկապված են միմյանց, գտնվում
են մեկը մյուսին պայմանավորող անխնելի միասնության մեջ։

Յերևակայեցեք մի րոպե, թե ինչ դրության մեջ կարող
եք լինել մեր յերկիրը, յեթե չհաղթանակեր պրոլետարական
հեղափոխությունը 1920 թվի նոյեմբերին։ Հյուծված մի գա-
ղութ անդիրական կամ Փրանսական սպանների գարշապարնե-
րի տակ։ Ավելի վատ, քան իրաքը կամ Սիրիան։ Ժողովրդի
գաղութային չհաջործում, աշխատավորական մասսաների
չարդ, քաղց, գործազրկություն, կուլակի արյունախում
թաթը աշխատավոր գյուղացու մեջքին, ազգամիջյան թշնա-
մանք, չովինիստական կրքերի հրահրում, կուլտուրական ան-
կում ու վայրենացում։ Ահա դաշնակցական հայաստանի
պատկերը, այն Հայաստանի, վորի համար կատարելով տե-
րերի պատմերը՝ շարունակում են դավեր հյուսել մեր դեմ
դաշնակ չները։ Իղո՞ւր աշխատանք։ Նրանց հաշվեհարդարը

մեր յերկրում կատարվեց 12 տարի առաջ՝ Հայաստանի բանակութիւնի և աշխատավոր գյուղացիների հեղափոխական բըռնության, զինված ժողովրդի ալտորիտետի ուժով,—ինչպես կասիր Ենդեմը։ Խոկ անցած 12 տարին անհաղթ ու ամրակուռ դարձրին Խորհրդային Հայաստանը, Խորհրդային մեծ հայրենիքի անրաժան ջոկատը։ Նայեցե՛ք Խորհրդային Հայաստանին։ Կարող եք պարձանքով ասել մեր բարեկամներին ու Շշնամիներին—ահա լինինյան աղղային քաղաքականության մի փայլուն կոթող։

«Մեծ հեղափոխության տարեդարձ տաճելու լավագույն միջոցը—նրա չործված խնդիրների վրա ուշադրություն կենարնեցնելն ե», ասել է Լենինը։ Տեղին ե հիշել այդ այսոր, յերբ հաշվի յենք առնում մեր աշխատանքի ու պայքարի, մեր հաղթանակների հանրագումարները։ Այսո՛, խոշոր են մեր հաղթանակներ, և աշխարհում այլևս վոչ մի ուժ ենաւ չի կարող վերցնել դրանք մեզնից։ Բայց բայց նիկեները, —այդ մասին նախադպուշացրել են մեղ մեր ուսուցիչները, —չպիտի գրասաբույտի յենթարկվեն բարձունքների վրա։ Մենք դափնիների վրա հանդստացողներ չենք։ Մենք տեսնում ենք նոր խնդիրները, վորոնիք ծառայում են մեր առաջ, այդ խնդիրների լուծման դժվարությունները՝ մեր անման դժվարությունները։

Մասսաների հնատուղիազմը ծնեց «Ծամյակը 4 տարում» լոդունդր։ Յեվ մասսաները վոչ մի ջանք չեն ինայում՝ իրենց այդ նախաձեռնությունը պատվով ավարտելու համար։ Այժմ, յերբ կարճ ժամանակ ե մնում, արձանագրվող մեծ նվաճումներին զուգընթաց, չենք կարող ասել, վոր մեր բոլոր կազմակերպություններն անհրաժեշտ հմտությամբ գլխավորում են մասսաների այդ նախաձեռնությունը։ Զնայած բոլոր անհրաժեշտ պայմանների և նախադրյալի՝ մասսաների արտադրական վերելքի առկայության՝ մեր վորոշ ձեռնարկու-

թյուններում պլանի թերակատարումը դեռ չարունակվում է։ Ալահվերդին, Ղափանը, Տեքսանիլը դեռ չեն գտնվում պլանների կատարման բարձրության վրա։ Այդ լուրջ սպառնալիք և ստեղծում հետ մնալու 5-ամյակը չորս տարում իրագործող մյուս խորհրդային Հանրապետությունների շարքից։ Միանգամայն ուեալ մեր պլանների լիակատար իրագործման համար պակասում ե մեր մի շաբք կուսակցական, պրոֆեսիոնալ, կոմունուլիստական կազմակերպություններում մասսաների ակտիվությունը կազմակերպելու և ուսցիունալ հունի մեջ զնելու անհրաժեշտ ունակությունը։ Առաջին կիսամյակի որինակով պիտի լրացել բոլոր ուժերը՝ լրեվ հասուցելու համար 5000 տոնն պղնձի պարտքը յերկրին։

Փաստ չե՞մ միթե, վոր մեր վոչ բոլոր կազմակերպություններն ըստ հարկին ըմբռնեցին ընկեր Ստալինի հայտնի 6 ցուցումների իմաստը, նրանց տևական նշանակությունը, մեր վոչ բոլոր կազմակերպությունները կարողացան զատորոցել այդ ցուցումների իրագործման համար մղվելիք պայքարը սովորական կամպանիայից։ Առաջնորդի վեց պայմանները դեռ չեն դարձել և պետք ե դառնան մեր յուրաքանչյուր կազմակերպության, յուրաքանչյուր ողակի աշխատանիքի ու պայքարի դրոշը, նրանց կոնկրետ դեկալարության ուղեցույցը։ Այդ գեղգում և միայն այդ գեղեկում կհաջողվի ամենուրեք բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, անթերի կատարել պլանները։

Հոկտեմբերը բայց և իշխան տեմպի մի նոր կոչ և մեր բոլոր նոր կառուցումներին։ Քիմշինի և Ցեմշինի գործարկումն ապահովել այս տարի, արագացնել Ղափանի ֆլուտացիոն գործարանի և Ալահվերդու նոր հալոցի կառուցումն ու պարտգմը՝ ահա մարտական խնդիրը։

Պլանների կատարման վրա բացասաբար են անդրադառնում մատակարարման ասպարեզում յեղած դժվարություններն ու բացերը։ Պատահական չե, վոր լնկ։ Ստալինը դեռ իր

վեց ցուցումներում հատուկ տեղ և հատկացրել այդ խընդ-
րին։ Սակայն Հենց հարցն ել նրանումն ե, վոր առաջնորդի
այդ խիստ կարեոր ցուցումից մեր վորոշ կազմակերպու-
թյունները դեռ մինչև այժմ ել բոլոր անհրաժեշտ գործնական
հետևությունները չեն արել։ Դրանով պիտի բացատրել մա-
տակարարման դժվարությունների արհեստական սրումն
առանձին դեպքերում։

Թե վորքան մեծ նշանակություն ե տալիս կուսակցու-
թյունը բանվորական, կոլտնտեսական և աշխատավորական
լայն մասսաների նյութական բարեկեցության աճմանը, այդ
պարզ յերեսում ե նաև մեր վերադաս որդանների վերջին մի
շարք կոնկրետ գիրեկտիվներից ու ձեռնարկումներից։ Մանր
ինդուստրիայի բարձրացման հետ միասին և նրա ստեղծած
բազայի վրա բերել արդյունաբերության արտադրանքին
ավելի լայն չափով գարկ տալը, խորհրդային-կոլտնտեսական
առևտրի ծավալումը, մերձաղաքային և գործարանային
հատուկ տնտեսությունների կազմակերպումն ու զարգացումը
և այդ ամենի առքիվ կուսակցության կենտրոնի սեպտեմբե-
րյան պլենումի բոլոր մարտական վարչումների կիրառումը
պետք ե գենֆ դարձնել՝ ամենուրեք բարեկավելու համար մա-
տակարարման գործը։ Բայց էկիորեն պիտի հաղթահարել
այդ ասպարեզում յեղած բոլոր դժվարությունները։ Անհրա-
ժեշտ ե, վոր անխոսիր մեր բոլոր կազմակերպությունների ու-
շադրության կենտրոնը գրավի բանվորական, կոլտնտեսական
և աշխատավորական լայն մասսաների նյութական-կենցաղա-
յին մակարդակի հետագա բարձրացման խնդիրը։

Մեր կազմակերպություններն ու որդանները պետք ե
ավելի հմտորեն կազմակերպեն ու գլխավորեն խորհրդային
ու կոլտնտեսական առևտրի ծավալման գործը՝ չժողովնով
այն ինքնահոսի։ Զարեւք ե թույլ տալ ասլրանքակուտակում-
ները, վորոնք այժմ ել բացառիկ չեն վորոշ ողակներում։
Անհրաժեշտ ե բոլոր տնտեսական լժակները գործի գնել՝ ա-

պահովելու համար նորմալ գները, վորովհետեւ կուսակցությու-
նը շեշտակիորեն դնելով խորհրդային-կալտնտեսական առև-
տրի ծավալման խոնդիրը, անխնա պայմանագրելով այդ ծավալումն
արգելակող աղմինիսարատիվ միջոցների դիմ, քնալ նկատի
չունի նահմացնել առևտրի կարգավորման, գների իջնցման
իր փորձաված մերողների դիմքն ու նշանակությունը։ Յերեք
չի կարելի հանդուրմել այն փասուը, վոր մի շարք անտեսա-
կան կազմակերպություններ մատների արանքով են նայում
գների կարգավորման խնդիրն։

Յերբեք չի կարելի հանդուրմել այն փասուը, վոր մի շարք
տնտեսական կազմակերպություններ, չնորհելի իրենց բյարո-
կրատիկ անհոգության, վոչ միայն չեն նպաստում գների
կարգավորմանն ու իջնցմանը, այլև վարչական-առևտրական
վերադիրների անթույլատրելի ուռացացումով հարգածում են
կուսակցության քաղաքականության ճիշտ կիրառման այդ
բնագավառում։ Մեր տնտեսական-առևտրական ու կոռու-
բրատիվ կազմակերպությունների վորոշ ողակներում քանի
որած նեպմանական վորու վիճական արմատախլումը 15-րդ
Հրատակմբերի կարեւրագույն լոգունիքներից մեկը պետք ե
համդիսանա։ Հայկոսովի առաջ հրամայական խնդիր և գոր-
գում՝ անհապաղ և մինչեւ վերջը հաղթահարելու իր շատ միա-
փորներում գեռ շարունակվող շփոթվածությունը, ավելի
արագ վերակառուցվելու կուսակցության գիրեկատիվներուն
բանմատակարարման ասպարեզում իրեն վերագահված շա-
փագանց պատասխանատու խնդիրների իրադորժման համար։

Գյուղում մեր տուած ծառացած կարեւրագույն խնդիրը
կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական հե-
տագա ամրացումն ե, վորի համար պետք ե բավարույն միջոց
ծուային բոլոր գյուղատնտեսական ընթացիկ կամ օրանիտնե-
րը։ Աշխատանիքի և նրա արդյունքների բաշխման նիշտ կազ-
մակերպման համար, դիմագրիկության վերացման համար,
ագրունինիկական գիտելիքների լայն տարածման համար

չպետք է խնայիլի և վոչ մի ջանք : Այդ ամենի հիման վրա
միայն մեղ կհաջողվի լիսկատար կերպով ողտագործել կո-
ւեկտիվ տնտեսությունները, բարձրացնել կոլտնտեսություն-
ները, բարձրացնել կոլտնտեսային դաշտերի բերքատվու-
թյունը, դրանով իսկ ավելի բարձր աստիճանի վրա դնելով
կոլտնտեսականների նյութական-կենցաղային մակարդակի
բարելավման գործը : Անհրաժեշտ և համառ աշխատանքով
ապահովել վոչ միայն կոլտնտեսական, այլև անհատական
աշխատավորական տնտեսությունների բամբակի և հացահա-
տիկի դաշտերի, այդինքով բերքատվությունը : Այդ խնդիրը
հարվածային կարգով հենց ընթացիկ դյուզատնտեսական
կամպանիաներում պետք ե գրված լինի մեր բոլոր գյուղական
կազմակերպությունների առաջ : Մինչև 12-րդ նոյեմբերը
հենց բերքատվության բարձրացման նշանաբանով պետք և
ավարտել աշնանացմանը, վոչ մի փաքիլ բամբակ չըռդնել
դաշտում :

Կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական
այդպիսի ամբազնություն իր հերթին առենառւեղ միջոցը
կհանդիսանա՝ ջարդութշուր անելու պարուված, բայց իր
զենքը վար չդրած կուլակի, երա իշենքով դաշնակի մենենա-
յությունները գյուղի սոցիալիստական վերակառուցման դեմ,
և զորեղ խթանը՝ կոլտնտեսությունների նոր տնման : Չպիտի
մոռանալ, վոր կուլակության՝ վորպես դասակարգի՝ վերա-
ցումը դեռ չի ավարտված . այդ խնդրի շնուրափությունումը
վերջին հաշվով կախված կլինի նրանից, բե վորքանով մեզ
կհաջողվի իր բարձրության վրա դնել կոլտնտեսությունների
կազմակերպական-տնտեսական ամբազման համար մղվող
պայքարը : Առանց դրան, շեշտում ենք, չի կարելի ապահովել
մեր կոլտնտեսությունների անհրաժեշտ անումը և հետևա-
բար կուլակության՝ վորպես դասակարգի՝ խոյառ վերացու-
մը :

15-րդ Հոկտեմբերը դարձնենք նոր և գնաական բեկման

սկիզբ մեր առաջ դրված այս և մյուս խնդիրների խոր ըմ-
բռնման և արագ ու լրիվ իրագործման : Սոցիալիստական
ժնարարության բոլոր ճակատամասերում Խորհրդային Հա-
յաստանի բանվորները, կոլտնտեսականները և բոլոր աշխա-
տավորները, մեր գիտական-տեխնիկական ինտելիգենցիան,
կուսակցության զեկավարությամբ պետք ե աշխատեն պատ-
վով իրագործել այն բոլոր խնդիրները, վոր գնում և Մեծ
Հոկտեմբերը մեր առաջ՝ ներկա շրջանում : Ժամանակը չի
սպասում . դաժան կրիզիսից խելակորույս միջազգային իմ-
պերիալիզմի արյունուշու բորենիները շարունակում են տեղ-
դորեն պատրաստել արյան նոր բազեիքները : Նրանք շարունա-
կում են վորոնալ հակախորհրդային ինտերվենցիայի պրոլե-
տարական վորոշ շրջաններ վերջ չեն տալիս իրենց քանից վիճակ
փորձերին՝ Հեռավոր Արևելքում Խորհրդային Միությանը
պրովոկացիայի յենթարկելու ուղղությամբ :

Միջազգային իմպերիալիզմին, իր այդ հրեշտավոր ար-
կածախնդրությունների իրագործման ասովարեկում, խոչըն-
դու և հանդիսանում յենինյան կոմինտերնի որեցոր աճող
ազգեցությունը, բուրժուատան յերկրների պրոլետարական
ժամաների հեղափոխական վերելքը, նրանց ակտիվ պայքարն
ընդգետ պատերազմի և համուն Խորհրդային Միության պաշտ-
պանության, սոցիալիզմ կառուցող յերկրի հմայքի, հեղինա-
կության և ուժի անխորսակ բարձրացումը : Լինել իսկական
հարվածային, իսկական աշխատանիշային մարտիկ սոցիա-
լիստական շինարարության բոլոր նակատներում՝ նշանակում
ե ավելի ուժեղացնել, անպարտելի դարձնել միջազգային
պրոլետարիատի հայրենիքը, նշանակում ե լինել պատրաստ
համաշխարհային Հոկտեմբերի դիրքերում : Ավելի սեղմել
ժիառնական շարքերն ընկ . Սատրինի գլխավորած յենինյան

Կենտկոմի շուրջը և նրա զեկավարությամբ, ընդդեմ բոլոր
տեսակի ու դույնի կապիտուլյանտների, նոր թափով ու յե-
սանդով գեղի աշխատանք ու պայքար կռւսակցության պլատ-
ֆոր գծի իրադորձման համար :

1932 թ. նոյեմբեր.

Բ Ա Գ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ա Խ Ե Ն

- | | |
|-----------------------------------|----|
| 1. 10-րդ տարեգարք | 3 |
| 2. 11-րդ նոյեմբեր | 17 |
| 3. 15 րդ հոկտեմբեր—12-րդ նոյեմբեր | 27 |

Ին. № 36554

Տեխնիկական ձեվագործումք Մ. Եֆիմի

Սրբագրիչ Լ. ԱբովՅԱՆ

Հաճանված ե արտադրության 15 նոյեմբերի 1932 թ.

Ստորագրված ե տպելու 19 նոյեմբ. 1932 թ. 82,000 տպ. նշ.

Պետերասի տպ. Գլուխիս 7689(թ) Հրատ. № 55 Պատու. 3485 Տրբաժ 4000

«Ազգային գրադարան



NL0418728

9500 40 4.

Арм.

2-12738

БПБ
О.Р.
Акт № 519

А. ХАНДЖЯН
ПО ПУТИ БОРЬБЫ И ПОБЕД

Партизат -- 1938 -- Эривань